ԱՆԱՀԻՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Բաժանում ենք գիտական գրականության մեջ ամրագրված այն մոտեցումը, որ «մարդկային գործոն»-ը կոմպլեքսային հասկացություն է, որն իր մեջ ներառում է մարդկանց ֆիզիկական կարողությունները, նրանց հասարակական ու տնտեսական դերը, նրանց հոգևոր պոտենցիալը: Սակայն այդ հասկացության միջուկը հասարակության անդամների սոցիալական որակներն են՝ ընդունակությունները, վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ, միջանհատական փոխհարաբերությունների բնույթը, կազմակերպվածության, կարգապահության մակարդակը և ստեղծագործական ակտիվությունը: Ակնհայտ է, որ «մարդկային գործոն»-ը հասարակական կյանքի ամբողջական սուբյեկտն է և ունի բարդ կառուցվածք: Կառուցվածքային առումով, մարդկային գործոնի տարրերն են՝գիտելիքները, հմտությունները, արժեքային կողմնորոշումներն ու դիրքորոշումները, գիտակցականությունը, քաղաքական ու գաղափարախոսական փորձը, աշխարհայացքը, բարոյա-հոգեբանական որակները: «Մարդկային գործոն»-ի բնութագրումը սերտորեն առընչվում է այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսիք են՝ «շահը», «պահանջմունքը», «ակտիվությունը» և այլն: Ընդ որում «ակտիվությունը» այդ կատեգորիաներն ինտեգրող հասկացությունն է: Մարդկային գործոնի դրսևորման կարևորագույն ձևերից է անհատի սոցիալական ակտիվությունը: Մարդուն սոցիալական ակտիվության են մղում նրա նյութական և հոգևոր պահանջմունքները: Պետք է ասել, որ հենց սոցիալական ակտիվությունն է բացահայտում մարդկային գործոնի հասարակական էությունը և մարդու գոյության եղանակը, նպաստում ակտիվ կենսադիրքի ամրապնդմանը: «Ակտիվ կենսադիրքը մարդուց պահանջում է զգալիորեն ավելի շատ բան, քան՝ պարզապես իր անմիջական պաշտոնական և քաղաքացիական պարտականությունների ազնիվ ու բարեխիղճ կատարումն է: Այն թելադրում է այնպիսի գիտակցական ու կամային արարքներ կատարելու ընդունակություն, որոնք վարչական, իրավական կամ այլ հրահանգներով չեն թելադրվում»[1]: Այս դիրքորոշումներից ելնելով, մարդկային գործոնի ակտիվացման խնդիրը չի հանգում սոսկ մասնագիտական խնդիրների, բարոյա-

[1] Роговин В. З. Формирование разумных потребностей, М., 1979, с. 58.

հոգեբանական որակների էության իմաստավորման հասարակ փաստին, այլ՝ դրանց նկատմամբ ակտիվ վերաբերմունքի դաստիարակմանը: Այլ կերպ ասած, դաստիարակության սոցիալական նշանակությունը նշված բարոյա-հոգեբանական որակների նկատմամբ՝ մարդկանց ներքին դիրքորոշման ձևավորման մեջ է: Ավելին, մարդկային գործոնի ակտիվացման այդ ներքին դիրքորոշումը միակ նպատակը չէ: Այդ շղթայի մեջ զգալի տեղ են գրավում այն սոցիալ-հոգեբանական և տնտեսական գործոնները, որոնց շնորհիվ մարդու բարոյա-հոգեբանական արժեքները վերածվում են ամենօրյա սովորությունների համակարգի: Հասկանալի է, որ «մարդկային գործոնը վերլուծելիս, մեր առջև հառնում է «գիտելիքներ-հմտություններ-վարք» ամբողջական կառուցվածքը, որի ուսումնասիրությունը պահանջում է կիրառել համակարգային մոտեցման սկզբունքներ»[2]: Սոցիալական ակտիվության ծավալումը, մի կողմից, պահանջում է ըստ ամենայնի յուրացնել հասարակական փորձը, լայնորեն հենվել գործունեության կայունացված կենսաձևերի վրա, իսկ մյուս կողմից, հաղթահարել զանազան խոչընդոտներ, ստեղծել հասարակայնորեն նշանակալից՝ հասարակության կողմից թույլատրվող վարքի նոր եղանակներ: Սկզբնայտ է, որ սոցիալական ակտիվությունը անհատին թույլ է տալիս, կարծես թե դուրս գալու իր անմիջական կենսափորձի սահմաններից, վեր կանգնելու իր անձնական նեղ շահերից: Ընդհանուր առմամբ, սոցիալական ակտիվությունը նախաձեռնողական, նորարարական, լայն իմաստով, ստեղծագործական գործունեության բնույթ ունի: Այդ իսկ պատճառով, նախաձեռնությունը, ստեղծագործական ինքնագործունեությունը անհատի սոցիալական ակտիվության կարևորագույն չափանիշներն են:

Այսպիսով, ստեղծագործական ինքնագործունեությունը, նախաձեռնությունը մեծապես խթանում են անհատի սոցիալական ակտիվությանը, նրա մեջ զարգացնում են այնպիսի բարոյա-հոգեբանական որակներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, կարգապահությունը, կազմակերպվածությունն ու հետևողականությունը:

Սոցիալական ակտիվությունը պահանջում է ինքնատիրապետում, ստեղծագործական համարձակություն, ռիսկի դիմելու ներքին պատրաստակամություն և այլն: Անդրադառնալով դրանց, Ա. Ս. Մակարենկոն նշել է՝ «Ռիսկը աշխատանքի իրավունքի անբաժան մասն է»[3]: Անհատի ինքնադաստիարակման ու ինքնակատարելագործման պահանջմունքը կարևոր տեղ է գրավում

---

[2] Блауберг Н. В., Юдин Э, Г. Системных подход-фолософский энциклопедический словарь., М. 1983.
[3] Макаренко А. С. Собр. Соч. Т7.М.1952, с141.

սոցիալական ակտիվության մոտիվացիոն- արժեքային կարգավորման համակարգում: Ինքնակատարելագործումը մարդկային գործոնի ակտիվացման, նրա հասարակական, քաղաքական և բարոյական հասունացման կարևորագույն պայմաններից է: Նկատենք, որ ինքնակատարելագործման, ինքնադաստիարակման պահանջմունքն իր մեջ ներառում է ինքնակրթության, մասնագիտական որակավորման բարձրացման ձգտում, անհատի ամենօրյա կենսագործունեության, սոցիալական, բարոյական և գեղագիտական կողմերի ըստ ամենայնի զարգացում: Ըստ էության, այն նպատակաուղղված է անհատի հոգևոր հարստության համակողմանի ծավալմանը, որն ըմբռնվում է որպես մարդու ստեղծագործական ընդունակությունների բացարձակ բացահայտում:

Ինքնադաստիարակման պահանջմունքը, որպես անհատի սոցիալական ակտիվության բարոյական կարգավորիչ, ձևավորվում է նրա գաղափարաքաղաքական, սոցիալ-բարոյական և հոգեբանական զարգացման որոշակի մակարդակում: Վ. Ա. Սուխոմլինսկին միանգամայն արդարացիորեն գտնում է, որ «դաստիարակությունը, որ մղում է ինքնադաստիարակության, հենց իսկական դաստիարակությունն է»[4]:

Ինքնադաստիարակության, ինքնավերահսկողության և ինքնակառավարման գործոնների դերը մեծապես աճում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, նորացման պայմաններում, երբ ինքնուրույն որոշումներ կայացնելու անհրաժեշտությունը դառնում է անհատի ստեղծագործական ինքնագործունեության ծավալման պարտադիր պայման: Այսպիսով, անհատի սոցիալական ակտիվությունը, նրա ինքնագործունեությունն ու նախաձեռնությունը անհատականի և հասարակականի բարդ միասնություն է: Այդ փոխհարաբերակցության օրգանական միասնության խախտումը կարող է հանգեցնել մի կողմից, սեփական դիմագծից ու նախաձեռնությունից զուրկ մարդու ձևավորմանը, իսկ մյուս կողմից, սուբյեկտիվիզմի, վոլյունտարիզմի, բյուրոկրատիզմի տարբեր դրսևորումների, երբ անհատի ակտիվությունը ոտնահարում է այլ մարդկանց շահերն ու կենսական պահանջմունքները: Փաստ է, որ բյուրոկրատիզմը միշտ էլ լուրջ պատնեշ է եղել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ճանապարհին: Այստեղ կարևոր է նկատի ունենալ, որ բյուրոկրատական խեղաթյուրումներն ամենից ավելի ցայտուն են դրսևորվում այնտեղ, որտեղ բացակայում են գործարարությունը, հրապարակայնությունը, վերահսկումը, հետևողականությունը, որտեղ թուլացված է պահանջկոտությունը հանձնարարված գործի նկատմամբ: Հաճախ, հենց այս հիմքի վրա էլ ձևավորվում են շահամոլությունը, հովանավորչությունը, խնամակալությունը:

---

[4] Сухомлинский В. А. О воспитании. М. 1973, с.262.

Առանձնակի պետք է նշել, որ մարդկային գործոնի սոցիալական ակտիվության ծավալումն ու զարգացումն անխզելիորեն կապված է սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացման, ինչպես նաև սոցիալական արդարության սկզբունքների պահպանման հետ, քանի որ արդարության և անարդարության մասին մարդկանց պատկերացումների հիմքում, վերջին հաշվով, ընկած են նրանց շահերը: Ինչ խոսք, սոցիալական արդարության սկզբունքները միշտ էլ կենսագործվում են որոշակի սոցիալական անհավասարության հիմքի վրա: Այնուամենայնիվ, մի բան հստակ է. ոչինչ այնպես չի զարգացնում մարդու ակտիվությունը, որքան արդարության սկզբունքի պահպանման և անշեղ իրականացման նկատմամբ նրա վստահությունը:

Մեր կարծիքով, մարդկային գործոնը պատմական զարգացման ներկա փուլում ստանում է իմաստային նոր բովանդակություն՝ ընդգրկելով մարդկային գործունեության բոլոր ոլորտները: Ինչ խոսք, այսօր բարձրացել են պահանջները ոչ միայն մարդկանց մասնագիտական որակավորման, այլև հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվության, ինքնուրույն վճիռներ կայացնելու ընդունակության, նախաձեռնության, ազնվության, հասարակական պարտքի կատարման պատրաստակամության նկատմամբ:

Մարդը հիմնական արտադրողական ուժն է, ուստի հարկավոր է կրթել ու դաստիարակել նրան, բացահայտել նրա ուժերն ու հնարավորությունները, քանի որ կյանքը ցույց է տալիս, որ հասարակության առաջընթացի տեմպերը նշանակալից չափով պայմանավորված են հենց մարդկային գործոնի ակտիվացմամբ ու զարգացմամբ:

Օգտագործված գրականություն

1. Блауберг Н. В., Юдин Э, Г. Системных подход-фолософский энциклопедический словарь, М. 1983, с. 613.
2. Роговин В. З. Формирование разумных потребностей, М. 1979, с. 58.
3. Макаренко А. С. Собр. Соч. Т.7,М.1952, с.141.
4. Сухомлинский В. А. О воспитании. М. 1973, с.262.

The display of human factor activation at the present time.

In the article the author turns to the conception <<human factor>>, its structure ,the forms of expression of human factor, particularly individual's social activity, as well as social responsibility and problems related to the social fairness and unfairness. In the article the author constantly substantiates that the human factor gets new sensible meaning at present phase including all spheres of human activity, It's fact, that the requirement raised but also the responsibility to the given task, to the ambition awn decision making, to the initiate, to the honesty, to the readiness of social obligation. Therefor the society's progress rate for the greater part depends on the activation and development of human factor.